



196. ՏՂԱՆ ՄՈՐԸ ԽՆՔՑ Ա ՕՆՈՒՄ

Մին քյանսիբ տղա փսակվում ա, հարսը պիրունմ տոն, թողում
մորը քշտին, ինքը քյինամ զարիբություն, վըեր փող ըխշադին
Հարսը մին փիս, կուապաշտ կնեգյ ա ինում, ըսկեսվորը օր ու
արև չար տամ, միշտ նհետը կուեվ ար անում, իրեսնըյեր խոսում,
ասում.—Հո՞ր ըս պարապ կենում, ուրուշջուն ըշխադած հացն օտում:
Ըսկեսուրը ետ ա տըեռնում հարսեն ասում.—Պա հինչ ա՞նեմ, մըեն
կնեգյ ըմ, շատըս քյեցալ ա, խրեգյըս ա մնացալ, հի՞նչ կըկարեմ
անեմ: Հարսը թա.—Դյուղունմ լըմ, քյինա սրա-նրա հետե պեն
ըրա, հաց տան, կեր:

Ըսկեսուրը քյինամ ա սրա-նրա տոնը սրփունմ, ճուրը պիրունմ,
լվացքն անում, մին պին ըն տամ, պիրունմ ա տոն: Հունց ա պը-
տահում, վըեր մին քանի օր պուազեն ծեն տվող յի ինունմ, թա եք
ինձետե պեն ըրա: Հարսը նորից ա ըսկեսում ըսկեսվորը իրեսնըյեր
խոսելը, թա.—Հինչ ը՞ս հպարապ տանը նստալ, հու վա՞ քու նհ-
քյանըրտ, վըեր ըխշադի, քեղ պահե: Ըսկեսուրն ասում ա.—Հինչ
ա՞նեմ, էլ ծեն տվող յի կա, թա իք պենըս ըրա: Հարսը թա.—Սեն
տվող յի կա, մին քանի ծուն տիր տակետ, յիրան նստե, ճոտեր
հանե: Պառավը մին տասսը ծուն վա տինունմ տակեն, յիրան նըս-
տում, վըեր նոտեր հանե: Թսանմին օր պիտի ծուլանցը յիրան նըս-
տե, մին քանի օր վընք անց ա կենում, հըրվաները կյամ ըն պոա-

վեն ծեն տամ, թա եք էսհինչ պենն ըրա: Հարսը խափում ա, ասում տանը չի, քյինացալ ա էսհինչ շենը, իրան էսհինչ պարիկամեն կոշտը: Հըրվաները հըվատում ըն, ետ տըեռնում: Թսանմին օրը վրեր անց ա կենում, պառավը ճոտեր ա հանում, հետան անում, պահում: Հինշտընդ քյինամ ար, ճոտերը հետան քյինամ ին, ինքին էլ թուխսըկանու մնան սնս ար անում, իրան յիրան հըվագում, տանում փենը քանդում, ճոտերը զիրավ անում, մըրտկայինը պիրում տոն: Մին քանի ամես ճոտերը պահում ա, վրեր մծանում ըն, հարսը նորից ա ըսկեսվորը իրեսնըյեր խոսում, թա.—Հինչ ըս հպարապ նստալ, էն ա ճոտերը շըհացալ ըն, միշտ հետա՞տ լըս ըննական տանես-պիրիս, քյինամ մին էլ մին օրիշ պեն ըրա: Պառավը թա.—Հինշտեղ քյինամ: Հարսը ասում ա.—էն ա քյենդիրբազ ա եկալ, քյինամ իրանց քշտին մին պեն կասեն, կանես: Պառավը քյինամ ա օրիշ տըեղա եկած քյենդիրբազեն կոշտը, հարսը ադերին նհետ մալըհաթ ա անում, մին էծ ինքյ օնում, ըսպանում, տանում թաղում, ադերն էլ ծեն տամ, պիրում օրնենել տամ՝ սարավ վկա, վրեր ըսկեսուրը մըեռալ ա, ինքյն էլ եկալ ա թաղալ: Պառավեն էլ քյենդիրբազեն յիրա ծախում ա:

Պառավը քյենդիրբազեն քշտին քյնսա յա տըեռնում, նհետեղ քյենդիրբազը իրան մարթուցը նհետ քյինամ ար, ինքյն էլ նհետը Շենան-շին, քըզաքան-քաղաք պառավը քյենդիրբազեն նհետ տոնս ա կյամ էն քաղաքը, վըերգեղ իրան տղան ար ապրում: Խարարը վրեր հսնում ա քղաքին մարթուցը, թա քյենդիրբազ ա եկալ, խաղ ա ըննական, պռավեն տղան էլ ա ըսկանում, քյինամ թմաշա ընելի: Պառավը տղեն վրեր հըուցանա տըեսնում ա, ճինանչնմ ա: Մուտանում ա, կյեցեն քյուխին շնրերը մին-մին հանում եր քցնմ, իրեսը պեց անում: Տղան էլ մորն ա ճինանչնմ, իրուր անավ փըթաթվում ըն, ըսկըսում լաց ինիլը: Տղան վրեր հըուցընում ա, թա ըստեղ, սահանց քշտին հինչ օնես, մարը լոխ մին-մին նազլ ա անում: Տղան օզում ա, վրեր մորը տանե կոշտը, քյենդիրբազը թողում չի, ասում ա փող ընք տվալ, ինքյ կալալ, էլ ետ ծխելի մըետք շօնենքյ: Տղան շատ դաշանք-պղատանք ա անում, իրանց տված փողին էրկու շափ տամ քյենդիրբազեն մարթուցը, մորը ետ ինքյ օնում, շնրերը փոխում, իրեսը ժամկում, իրան ըպրանքեն տն հնգերումցը նհետ տանում իրանց տոն: Կնգանը հըցընում ա, թա պա հոր ա՝ իմար, կնեղյն ասում ա.—Մըրեռալ ա, տարալ ընք էսհինչ տըեղը թաղալ: Տղան թա՝ սոտ ըս ասում, կնեղյն ասում.

ա.—Թա հըվատում լրս, քլինա աղերն անա հըրցըրու, նա յա թադալ, ասենք թա ևս ըմ խափում, էն սուրփ մարթն է՞լ չի քեզ խըփըլական։ Տղան թա աղերը ծեն տո, թող կյա։ Աղերը վըեր կյամա, տղան հըրցընում ա, տա ասում ա.—Թու մար էսհինչ տարեն ա մընուալ, էսհինչ տըեղն ընք թաղալ, կյիրիզմանն էլ ես ըմ օրհնալ։ Տղան թա.—Դե տարեք իմոր կյիրեզմանն ինձ նշանց տվեք։ Կնեղյն ան աղերը տանում ըն էծը թաղած տեղը նշանց տամ։ Տղան իրան նշետ քյինացած մարթուցն ասում ա.—Թինդեցեք, տըեսնանք ըստեղ հինչ կա։ Թանդիւմ ըն, տըեսնում մին էծ տիրած դոթուն մեշին, թաղած։ Տղան աղերին ան իրան կնդանն ասում ա.—Սղում ը՞թ, ես իմար տոնա օնեմ։ Տահանք թա։ —Տու կալ։ Թինամ ըն տոն մորը ծեն տալ ա տամ, կյեցեն շնըերը հանել տամ, իրան շուրերավը կյամ ա տահանց ըռաշին վըեննը կենում։ Տղան աղերին մրգան փոնում ա, ծիրէ տամ, պուկում, ետնան կնդանը տոնա քցում, քյինամ մին օրիշ կնեղյ պիոնիմ։

